ԵԴ2/1751/02/26
(ՎԴ5/0034/05/26)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 մարտի 2026 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին փոխարինող Հովսեփ Բեղնյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ԵԴ2/1751/02/26 (ՎԴ5/0034/05/26) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի մարտի 2-ի որոշումը,

ՊԱՐԶԵՑԻՆՔ

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. ՀՀ ԳԱԱ «ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ ներկայացուցիչը 2026 թվականի հունվարի 14-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, հետևյալ պահանջով՝

«Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը իրականացնելու Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված գործառույթները՝ այն է Հայաստանի Հանրապետության կառավարության «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 2001 թվականի նոյեմբերի 17-ի №1123 որոշմ[ա]մբ հա[ս]տատված կարգի, որպես պատվիրատու անցկացնել մրցույթ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծում գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրային ֆինանսավորման համար, ինչպես նաև վերացնել այն հետևանքները, որոնք առաջացել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության անգործության պատճառով»:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի մարտի 2-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի մարտի 9-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 202-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին, 234.5-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 3.1-րդ մասին, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, և Հայաստանի Հանրապետության Կառավարության «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 2001 թվականի

նոյեմբերի 17-ի *N* 1123 որոշմամբ հաստատված կարգին՝ ՀՀ վարչական դատարանը 2026 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանը փաստում է, որ սույն դեպքում ևս առկա չէ հանրային, այսինքն՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված որևէ սուբյեկտի իշխանական-կարգադրիչ գործունեությունից, գործողությունից կամ անգործությունից ծագող իրավահարաբերություն, քանի որ Դատարանի առջև բարձրացված վեճն ուղղված է պատասխանողին՝ որպես պատվիրատու, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մրցույթ անցկացնել պարտավորեցնելուն և հետևանքները վերացնելուն, իսկ նման իրավահարաբերությունները օրենսդրորեն աներկբա կերպով բնորոշվել են որպես քաղաքացիաիրավական և հանձնվել լուծման՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին: Ասվածով պայմանավորված՝ Դատարանը գտնում է, որ հիմնական հայցապահանջով Դատարանի առջև բարձրացված վեճն ամբողջապես բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից, չունի հանրային բնույթ, ուստիև դրա հիման վրա հարուցված գործն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին և ենթակա է վերահասցեագրման առաջին ատյանի ընդհանուր իրավասության համապատասխան դատարան»*[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, 202-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին, 234.5-րդ հոդվածին, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասին, 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 46-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ու Հայաստանի Հանրապետության Կառավարության «Գնումների

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 46-50:

գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգին՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի մարտի 2-ի որոշմամբ գործը ուղարկել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ գործի ենթակայության հարցը որոշելու նպատակով՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«(...) Դատարանը սույն գործով ներկայացված հայցադիմումի և վերոնշյալ իրավական նորմերի համադրության արդյունքում արձանագրում է, որ տվյալ դեպքում Հայցվորն, ըստ էության ցանկանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը պարտավորեցնել հայտարարել համապատասխան մրցույթ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծում գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրային ֆինանսավորման համար, քանի որ ըստ իրեն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը Հայցվորի կողմից վկայակոչած ծրագիրը՝ «Ջրանցքներում ջրի չափման մեթոդիկա և իրականացման սարքվածք, կիրառությունը Սևանա լճից ջրառի հաշվառման ժամանակ» 2026 թվականի բյուջեում ընդգրկելու նպատակով ոչ մի գործընթաց չի իրականացրել՝ դրսևորելով անգործություն, որի հետևանքով գիտական կազմակերպությունը կրում է վնասներ, որպիսի պայմաններում սույն վեճը չի կարող քննարկվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Գնումների հետ կապված վեճերով վարույթը» վերտառությամբ 27.2 գլխի կանոններով, քանի որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ որպես գնումների մասին ՀՀ օրենսդրության տեսանկյունից պատվիրատուի, վարքագիծն անգործություն որակելու համար, ի թիվս այլնի, նախևառաջ անհրաժեշտ է, որպեսզի Հայցվորի կողմից վկայակոչված ծրագիրը՝ գնման առարկան բխի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքներից և ներառված լինի տվյալ բյուջետային տարվա գնումների պլանում, որովհետև գնումների օրենսդրության տեսանկյունից գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների

մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

(...)

«ՀՀ ԳԱԱ Հ[Ի]ԴՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ-ն ներկայացված հայցադիմումով խնդրել է պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված գործառույթներն, այն է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 2001 թվականի նոյեմբերի 17-ի №1123 որոշմամբ հա[ս]տատված կարգի, որպես պատվիրատու, անցկացնել մրցույթ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծում գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրային ֆինանսավորման համար, ինչպես նաև վերացնել այն հետևանքները, որոնք առաջացել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության անգործության պատճառով, այսինքն՝ նշվածից հետևում է, որ տվյալ պարագայում իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ իրավահարաբերության բովանդակությունն, ըստ ներկայացված հայցադիմումի փաստական հիմքերի, կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների՝ վարչարարության ոչ պատշաճ իրականացումն (անգործությունը), մասնավորապես՝ մրցույթ չանցկացնելն, որը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ:

Նման պայմաններում պարզ է դառնում, որ սույն գործով առկա են վերը վկայակոչված բոլոր երեք [վավերապայմանները], ուստի վերը նշվածի հիմքով Դատարանն գտնում է, որ գործն առհասարակ ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով,

Վերոգրյալից ելնելով Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ2/1751/02/26 գործի ենթակայության հարցը որոշելու նպատակով այն պետք է ուղարկել Վճռաբեկ դատարան»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ2/1751/02/26 (ՎԴ5/0034/05/26) գործն ըստ ՀՀ ԳԱԱ «ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ ներկայացուցչի հայցի ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ վերջինիս իրեն վերապահված գործառույթների, այն է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 2001 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 1123 որոշմամբ հաստատված կարգի համաձայն, որպես պատվիրատու ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծում գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրային ֆինանսավորման համար մրցույթ անցկացնելու, ինչպես նաև նախարարության անգործության պատճառով առաջացած հետևանքները վերացնելու պահանջի մասին, ենթակա չէ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (…)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության*

---

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 58-67:

ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս

ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

ՀՀ Կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային, գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևերով պետական ֆինանսավորման կարգերը հաստատելու մասին» որոշման համաձայն՝

«(…) 2. Ուժը կորցրած ճանաչել (…) «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1123 որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա»:

Նույն որոշման Հավելված N 2-ով սահմանված կարգի համաձայն՝

« 1. Սույն կարգը սահմանում է գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման (այսուհետ՝ նպատակային ծրագիր) հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը նկարագրում է նաև նպատակային ֆինանսավորման ողջ գործընթացը՝ հայտերի ներկայացման, քննարկման և հաստատման փուլերը, պայմանագրերի կնքումը, հաշվետվությունների ընդունումը:

3. Նպատակային-ծրագրային ֆինանսավորումն իրականացվում է մրցութային հիմունքներով և ուղղված է գիտության ու տեխնիկայի առաջնային ուղղություններին համապատասխանող գիտատեխնիկական պետական ծրագրերի կատարմանը:

(...)

9. Յուրաքանչյուր տարվա չորրորդ եռամսյակի առաջին ամսում համաձայնեցված ցանկում ներառված ծրագրերի առաջարկների ուղղությամբ՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով կազմակերպվում է նպատակային-ծրագրային ֆինանսավորման մրցույթ (այսուհետ՝ մրցույթ):

(...)

18. Խորհրդի կողմից ներկայացված առաջարկության և ձևավորված վարկանիշային ցանկի հիման վրա և ելնելով հաջորդ տարվա համար նպատակային ֆինանսավորման համար պետական հատկացումների ծավալից՝ նախարարի հրամանով հաստատվում է նպատակային ծրագրերի ցանկը, որը ներառվում է Հայաստանի Հանրապետության հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծում:

19. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենքի և վերջինիս կատարումն ապահովող միջոցառումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումից հետո կոմիտեն նպատակային ծրագիր իրականացնող կազմակերպությունների հետ կնքում է պայմանագրեր (այսուհետ՝ պայմանագիր) (...)»:

Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարբերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց*

համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթ[ը] է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[3]:

9. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին է վերապահել բոլոր այն գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի առարկայական ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

---

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն*՝ վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- ՀՀ ԳԱԱ «ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ ներկայացուցիչը 2026 թվականի հունվարի 14-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, հետևյալ պահանջով՝

«Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված գործառույթները՝ այն է Հայաստանի Հանրապետության կառավարության «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 2001 թվականի նոյեմբերի 17-ի №1123 որոշմ[ա]մբ հա[ս]տատված կարգի, որպես պատվիրատու անցկացնել մրցույթ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծում գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրային ֆինանսավորման համար, ինչպես նաև վերացնել այն հետևանքները, որոնք առաջացել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության անգործության պատճառով»[4],

- գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ վերահասցեագրվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ Դատարանի առջև բարձրացված վեճն ուղղված է պատասխանողին՝ որպես պատվիրատու, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մրցույթ անցկացնել պարտավորեցնելուն և հետևանքները վերացնելուն, իսկ նման իրավահարաբերությունները օրենսդրորեն աներկբա կերպով բնորոշվել են որպես քաղաքացիաիրավական և հանձնվել լուծման՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին[5],

---

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

- ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի մարտի 2-ի որոշմամբ գտել է, որ վեճը չի կարող քննարկվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Գնումների հետ կապված վեճերով վարույթը» վերտառությամբ 27.2 գլխի կանոններով, քանի որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ որպես գնումների մասին ՀՀ օրենսդրության տեսանկյունից պատվիրատուի, վարքագիծն անգործություն որակելու համար, ի թիվս այլնի, նախևառաջ անհրաժեշտ է, որպեսզի Հայցվորի կողմից վկայակոչված ծրագիրը՝ գնման առարկան բխի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքներից և ներառված լինի տվյալ բյուջետային տարվա գնումների պլանում[6]:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8,9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ ՀՀ Կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշմամբ սահմանված կարգավորումը կիրառելի է սույն հարաբերության նկատմամբ՝ հաշվի առնելով, որ դրան տրվել է հետադարձ ուժ և այն տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: Քանի որ կողմերի միջև իրավահարաբերությունը ձևավորվել է նշված ժամանակահատվածից հետո, դրա իրավական գնահատումը պետք է իրականացվի հենց գործող կարգավորման շրջանակներում: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության Կառավարության «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1123 որոշմամբ հաստատված նախկին կարգավորման, ՀՀ Կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշմամբ սահմանված կարգավորումը ամբողջությամբ կենտրոնացնում է գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման գործընթացը՝ կարգավորելով դրա կազմակերպման, իրականացման և արդյունքների ամփոփման

[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

բոլոր փուլերը՝ առանց «Գնումների մասին» ՀՀ օրենքին հղում կատարելու ինչը վկայում է, որ նշված հարաբերությունների կարգավորումը դուրս է գնումների օրենսդրության առարկայական ոլորտից և ենթակա է գնահատման՝ որպես ինքնուրույն կարգավորում:

Այս պայմաններում, իրավահարաբերության բնույթը գնահատելով ՀՀ Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշման հիման վրա՝ հաշվի առնելով դրա սուբյեկտային կազմը, օբյեկտը և բովանդակությունը իրենց համակցության մեջ, հարկ է արձանագրել, որ սուբյեկտային կազմի տեսանկյունից իրավահարաբերության կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, որը հանդիսանում է հանրային իշխանական լիազորություններով օժտված վարչական մարմին: Միևնույն ժամանակ, հարաբերության բովանդակությունը դրսևորվում է պետական ֆինանսավորման մրցութային գործընթացի կազմակերպման, հայտերի գնահատման և ծրագրերի հաստատման փուլերում, որոնք իրականացվում են ՀՀ Կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման հավելված N 2-ով սահմանված կարգով՝ նախարարի կողմից ընդունվող իրավական ակտերի հիման վրա: Մասնավորապես, մրցույթի կազմակերպումը և ծրագրերի ցանկի հաստատումը կատարվում են նախարարի հրամաններով, ինչը վկայում է նախարարության կողմից իշխանական-կարգադրիչ բնույթ կրող լիազորությունների իրականացման մասին: Իրավահարաբերության օբյեկտը, իր հերթին, վերաբերում է պետական բյուջեի միջոցների բաշխմանը և գիտական ու գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորմանը, ինչը ուղղված է հանրային շահի իրացմանը:

Նշվածի հաշվառմամբ՝ սույն գործով վիճարկվող իրավահարաբերությունը կրում է հանրային իրավական բնույթ:

12. Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ2/1751/02/26 (ՎԴ5/0034/05/26) գործն ըստ «ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ ներկայացուցիչ հայցի ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝

վերջինիս իրեն վերապահված գործառույթների, այն է՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1123 որոշմամբ հաստատված կարգի համաձայն, որպես պատվիրատու ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծում գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրային ֆինանսավորման համար մրցույթ անցկացնելու, ինչպես նաև նախարարության անգործության պատճառով առաջացած հետևանքները վերացնելու պահանջի մասին, ենթակա չէ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

Ուստի, ՀՀ ԳԱԱ «ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ ներկայացուցչի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ԵԴ2/1751/02/26 (ՎԴ5/0034/05/26) գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ԵԴ2/1751/02/26 (ՎԴ5/0034/05/26) գործն ըստ ՀՀ ԳԱԱ «ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ ներկայացուցչի հայցի ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, հետևյալ պահանջով՝

«Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված գործառույթները՝ այն է Հայաստանի Հանրապետության կառավարության «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 2001 թվականի նոյեմբերի 17-ի №1123 որոշմ[ա]մբ հա[ս]տատված կարգի, որպես պատվիրատու անցկացնել մրցույթ

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծում գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրային ֆինանսավորման համար, ինչպես նաև վերացնել այն հետևանքները, որոնք առաջացել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության անգործության պատճառով», ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ
ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ
ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ